

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՄԱՅՐ ԱԹՈՒՐ

ՃԵՄԱՐԱԲԻ ՏԱՐԵԴԱՐԱԾ.—

Սեպտեմբերի 25-ին, շաբաթ օրը Ս. Գէորգայ տօնին կատարուեց Մայր Աթոռի Հոգեւ ճեմարանի բացման 36-րդ տարեդարձը։ Ս. պատարագից յետոյ Հանգուցեալ Գէորգ Դ. կաթուղիկոսի գերեզմանի վերայ կատարուեց հանդիսաւոր հոգեհանգիստ։ հանդիսադիրն էր Վեհափառ Հայրապետը, ներկայ էին բազմաթիւ ուխտաւորներ, որ Մուղնու Ս. Գէորգի ուխտի պատճառով հեռաւոր և մերձաւոր գաւառներից էին խմբուած։ Հոգեհանգստից յետոյ բոլորն էլ ուղղուեցին դէպի ճեմարան, որի հիւսիսային մուտքի առաջ յարդարուած էր դպրոցական հանդէսը Եկաւ և Վեհափառ Հայրապետը միաբանութեան հետ և սկսուեց սովորական հանդէսը աշակերտական երգերով և ճառերով։ Ուսուցիչներից խօսեց պ. Էդիլեանը։ տեսուչ Տ. Բագարատ վարդապետը կարդաց տարեկան տեղեկագիրը, իսկ Վեհափառ Հայրապետը փակեց հանդէսը բացատրելով ճեմարանի նպատակը և յորդորելով ուսուցիչներին աշխատել այդ ուղղութեամբ հայ Եկեղեցուն և դպրոցին անձնուելու, գիտուն ու պարտաճանաչ պաշտօնեաներ և հասարակութեանը՝ բարեկիրժ անդամներ պատրաստել։

Երեկոյեան ճրագալոյց էր Վանքի և ճեմարանի բակերում։ ուխտաւորների խուռն բազմութիւնը մինչև Եկեղեցեան 9 ժամը զուարճանում էր գիւղական երգերով ու պարերով։

**Վեհ. Հայրապետի անուանակոչութիւնը.**

Հոկտեմբերի 16-ին, շաբաթ օրը Սրբոց Աւետարան-չաց տօնին Վեհափառ Հայրապետի անուանակոչութիւնը լինելով նախընթաց Երեկոյեանը նորին Սրբութիւնը Եկե-

զեցական թափօրով եկաւ եկեղեցի, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ կատարուեց նախատօնակի Շաբաթ օրը Ա. պատարագից յետոյ, որ մատոյց Տեղապահ Տ. Դէորդ արքեպիսկոպոսը, ի ներկայութեան Վեհափառ Հայրապետի կատարուեց հայրապետական մաղթանք Ա. Իջման սեղանի առաջ, Մաղթանքից յետոյ հենց տաճարում միաբանութիւնը մատոյց իւր շնորհաւորութիւնները համբուրելով նորին Սրբութեան աջը:

Միաբանների յառաջընթացութեամբ Վեհափառ Հայրապետը եկեղեցուց վերադառնալով Վեհարան՝ ընդունեց ծեմարանի, Վաղարշապատի ծխական դպրոցների աշակերտաշակերտուհիներին իրանց ուսուցիչներով, և այլոց:

Շնորհաւորութեան համար Երեանից եկել էին Փոխ-Թեմակալ առաջնորդ Տ. Խորէն եպիսկոպոսը և Թեմական խորհրդի անդամները:

Ժամը 1-ին հասարակաց սեղանատանը ճաշ կար, որին հրաւիրուած էին միաբանութեան հետ Սինօդի, գաւառական և դատարանական վարչութեանց աստիճանաւորները, տեղական զօրքերի սպաները և Վաղարշապատի հասարակութեան ներկայացուցիչները: Սեղանը իւր ներկայութեամբ պատուեց Վեհափառ Հայրապետը, որը առաջարկեց Թագաւոր Կայսեր կենաց բաժակը, Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի, Նորին Սրբութիւնը շնորհակալութեամբ օրհնելով սեղանակիցներին՝ առաջարկեց հայ հոգևորականութեան և հայ ազգի կենացը, այնուհետև Վեհափառը մեկնեց Վեհարան և սեղանը աւելի ընտանեկան բնոյթ ստացաւ. խօսուեցին մի քանի ճառեր և առաջարկուեցին զանազան կենաց բաժակներ:

Երեկոյեան ճրագալոյց էր, և բազմութիւնը զրօննում էր Մայր տաճարի բակում զուարճանալով էլեքտրական կաթեղներով ձևակերպուած խորհրդանշաններով:

### Հոգեհանգիստներ

Ի ներկայութեան Վեհ. Հայրապետի հանգստեան պաշտօններ կատարուեցին կիւրակէ, Ա. պատարագից յետոյ

հոկտմ. 10-ին բագուարնակ յայտնի հասարակական գործիչ երգուեալ հաւատարմատար հանգուցեալ Բաղդասար Մովսէսեան (Բողդան Մօհսէեզիչ) Դոլուխանեանի և հոկտմ. 17-ին՝ Շուշեցի բարեգործ իսահակ Թաղէսոսեանի համար:

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՐԿԵՍՏԱՆՈՒՄ.

«Կրօնափոխութեան ինդիրներու համար Աղք. Վարչ չութեան ատենագպիր Տքդ. Սեղբոսեան Եֆ-ի ծրագրին համաձայն պատրաստուած թագրիրը կարգացուեցաւ Խառն Ժողովին անցեալ շաբթուան նիստին մէջ։ Այդ թագրիրին մէջ կըսուի թէ կրօնափոխութեան դիմումներ շատ անգամ հետևանք են առեանգութիւններու, հետեւաբար պէտք չէ նկատուին իբրև յօժարակամ դիմում։ միւս կողմէ կրօնափոխներու տարիքին համար ալ կառարկ կուի թէ, քանի որ վկայութեան համար 20 տարին լրացնող մը չափահաս կը համարուի, հետեւապէս կրօնափոխութեան համար ալ նոյն պայմանը պէտք է պահուի Վերջապէս նոյն թագրիրով խնդրուած է որ կրօնափոխներու համար վաղուց ի վեր գործադրուած ձեակերպութիւնները լիովին կատարուին»։

Տաճար

Աօխարեականների մասնակցութիւնը եկեղեցու բարեկարգութեան զօրծում.

«Կրօն. Ժողովոյ երէկուան (օգոստ. 27) նիստին մէջ անդամներէն Տ. Սոքիաս քհ. Պալքնեան յայտնեց թէ Հայ եկեղեցին ժողովրապետական ըլլալով, պէտք է եկեղեցական բարեկարգութեան ատեն ժողովուրդին կարծիքն ալ առնուի։ Ա. Պատրիարքն համամիտ գտնուելով՝ առաջարկեց որ ծրագիրները քննելու և դասաւորելու համար կազմուելիք Յանձնաժողովին մասնակցին ժողովը դեան կողմէ ընտրուած երկու պատգամաւորներ։ Յանձնաժողովի ընտրութիւնը յետաձգուեցաւ յառաջիկային, նկատելով որ դեռ շատ գաւառներէ չեն հասած սպասուած առաջարկները, ի մասին եկեղեց, բարեկարգութեանց».

Տաճար

Խառն ժողովի կարգադրումներ.—

**Սեպտմ.** 15-ին գումարուած պատրիարքարանի խառն ժողովը հաստատել է

1, Կորիւն քահանային՝ Արարկիրի առաջնորդական փոխանորդ.

2, Արտաւողդ վրդ. Գալէնտէրեանին՝ Եղիսիայի առաջնորդ.

3, Երուսաղէմի միաբան Մելքիսեդեկ վրդ. Հովիւեանին՝ Կամախի առաջնորդական տեղապահ.

Համագումար ժողովը շետաձգուած

**Սեպտմ.** 15-ին գումարուած կրօնական ժողովը նկատելով, որ եկեղեցական բարենորդման հարցի համար գաւառական հոգեոր իշխանութիւններից պատրիարքարանի չքարերականի պատասխան—տեղեկագրերը դեռ ամբողջովին չեն հասել,—որոշեց համագումար ժողովի նիստի օրը մի առ ժամանակ յետաձգել, մինչև որ հասնեն այդ տեղեկագրերը:

Զինուորագրութիւնից ազատ են դպիւները.

Տաճկաց կառավարութիւնը ի նկատի ունելով պատրիարքարանի թագրիրները պատասխանել է, որ զինուորագրութիւնից ազատ են. 1, պատրիաքներն ու առաջնորդները, 2, վարդապետներն ու քահանաները և 3, դպիրները (շեմմաս), սարկաւագները՝ որպէս քահանայութեան լնտրելի, դպիրները՝ որպէս եկեղեցու պաշտօնեայ, միայն թէ պէտք է պատրիարքարանից վկայուած լինեն (Տաճար):

---

Մշակի (№ 224), կ. Պոլսոյ թղթակիցը գրում է, որ Թուրքաց կառավարութիւնը սահմանել է, կալուածական գնման և վաճառման համար բաւականանալ միայն թաղական մուխթարի կամ իմամի հաւաստիացումով, մինչդեռ օտարագաւանների վերաբերութեամբ առաջ պահանջւում էր տեղոյն թաղական խորհրդի և պատրիարքարանի գրաւոր հաւաստիացումն»:

Բարեբաղդաբար առաջին իսկ առիթով մի մուխթար

երկու սուտ վիաների ցուցմամբ կեղծ վիայական է տուել, որով յայտնուել է, թէ նոր սահմանուած կարգով մուխթարներն ու իմամները կաշառակերութեամբ՝ որպիսի անիրաւութիւններ կը գործեն, Այս նոր կարգը փոխելու համար մեր պատրիարքարանը հրաւէր է ուղղել յօյն, Հայ՝ կամուլիկ պատրիարքարաններին, բոլդար էկզարխին և հրէից բարունապետին, հաւաքական դիմումն կատարելու, Բալորն էլ, բաց ի յօյն պատրիարքարանից, համաձայնել են:

### ՀՈՅ ԿԱԹՈԼԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

ՏԵԱՆԱՒԼՎԱՆԻԱՅԻ ԽԱՅԻՐԸ

«Հանդէս ամսօրեայ»ի օդոստաս ամսատեարում Հ. Ա. Զնդոյեանը «Հունդարիայի Հայոց եպիսկոպոսութեան խընդիրը» վերնագրով մի յօդուածում ներկայացնում է Հունդարիայի հայոց վիճակը, որ հեռի է միսիթարական լինելուց:

1910 թուին կազմուած պաշտօնական մի ցուցակից Հ. Ա. Զնդոյեանը քաղել է հայ չորս ժաղովրդապետութեան հօտի պաշտօնական թիւը, որ է.

Կերլա հայաքաղաք՝ 1240 հայ

Եղիսաբէթուպօլիս՝ 394 „

Ճուրճով՝ 640 „

Սերվիդ՝ 98 „

---

2372 „

Իսկ Հունդարիայում կամ Տրանսիլվանիայում կարծուած 15—20 հազար հայերը ցրուած են ամբողջ երկրի գիւղերն ու քաղաքները, Կերլա հայաքաղաքը, ուր մի ժամանակ աւելի քան 7000 հայ կար, այժմ միայն 1300 հայ է հաշտում:

Հայերի նուազումն հետեւանք է խառն ամուսնութեան, ազգային լեզուի մոռացութեան և հայ կղերի գրեթէ սպառման:

Տրանսիլվանիայի առաջին և վերջին հայ եպիսկոպոսն եղել է Աւգուստիոս Վրդարեան, որին յօդուածադիրը մեծ

անձնաւորութիւն է կոչում. եղած օտարազգի եպիսկոպոս ները՝ է որ դիտաւորութեամբ և է որ հայ քահանայ զի՞նելու հետեւանքով նշանակել են լատին և օտարազգի ժագավրդապետներ, որոնք անդէմ հայ լեզուին և հայ եկեղեցական արարողութեան պէտք է ժամերգութիւնն ու ծէսերը կատարէին լատիներէն և լատին արարողութեամբ:

Չնայելով հայերի թուով պակասելուն և օտարանալուն, այնուամենայնիւ գրանց մէջ կան ազգային դիտակցութիւն ունեցողներ, որոնք ձգտում են ունենալ հայ եպիսկոպոս, որ հայ հօտի համար հայ ժողովրդապետներ հասցնի:

Տրանսիլվանիայի կաթոլիկ հայերը աներկրայ լինելով, որ Հռովմի կողմից արգելը չի լինի հայ եպիսկոպոս ունենալու, ջանք են անում Հռովմարիայի պետութեան հաւասնութիւնը ունենալ, այս բանին միջամտում է Կ. Պօլսոյ հայ կաթոլիկ պատրիարքարանը և բանակցութիւն վարելը յանձնում է Յովհաննէս ծ. վ. Թումայեանին, գործը տարտամ ընթացք ունի:

Յոդուածագիր Հ. Ա. Զնդոյեան համակիր լինելով հայ եպիսկոպոս ունենալու գաղափարին՝ կանգ է առնում հետեւեալ խնդիրների առաջ. սակաւաթիւ և ցիր ու ցան հայերը կը կարողանան հայ եպիսկոպոս և եպիսկոպոսարան պահել. հայ եպիսկոպոսը կը կարողանայ արդարացնել ժողովրդի յոյսերը, ինքն եպիսկոպոսն ու ժողովրդապետները բաւականաչափ եռանդ կունենան հայութեան հոգին, լեզուն ու դպրութիւնը զարգացնել և սիրելի դարձնել իրանց հօտին. և իրանց ժողովրդի հետ կը կարողանան օտար, ահագին յորձանքին դիմանար.

Հայ կարուիկների վարչական գործերը.

Այս տարի հայ կաթոլիկ համայնքը երեք նշանաւոր գէպք ունեցաւ. — առ Տաճկաստանում հայ կաթոլիկ պատրիարք ընտրուեց և հաստատուեց ընդհանուր ժողովրդականութիւն ստացած, Աղանայի հայ կաթոլիկների առաջնորդ, Թերզեան Պօլսոս եպիսկոպոսը. բ. Թուսաստանի հայ

կաթոլիկների թեմական կադմակերպութեան գործը որոշ կերպարանք ստացաւ, թեմական ատեանը և թեմի կառավարիչը պէտք է բնակութիւն ունենան Թիֆլիզում։ գ. Վեննայի Մխիթարեան միաբանութեան անցեալ տարի ընտրուած արքայ Հ. Գրիգորիս Գովրիկեանը այս տարի հաստատուելով իւր պաշտօնում, յունիսի 12-ին ն. ամեծ հանդիսով օծուել է Վեննայի առաքելական նուիրակից եպիսկոպոս Մծրինի արքեպիսկոպոս տիտղոսով։ Օժաման հանդէու կատարուել է լատին ծէսով։

Որքան փոյթ է տարուել Թերզեանի կաթողիկոսացումն հայ եկեղեցու արարողութեամբ կատարել, այնքան անտարբերութիւն է եղել Վեննայի Մխիթարեան արքայի օծման դէպքում, որ հայ կաթողիկների շրջանում աննկատ չէ անցել։ Զգիտենք ինչի՞ն վերագրել այս հանդամանքը, հարկի անհրաժեշտութեամբ, թէ դէպի ազգային եկեղեցու արարողութիւնները անտարբերութեանն Վեննայի արքան կարող էր իւր ձեռնադրութիւնն ու օծումն ստանալ Կ. Պալոյ հայ-կաթոլիկ պատրիարք կաթուղիկոսից։

### ԽՈՒՍ ՊՐԾԽՈՍ. ԵԿԵՂԵՑԻ

#### Առաջնարդների ոռմկի հաւասարութեան Խճիք

Պետական գումայում հարց էր զարթել թեմական առաջնորդների ոռճիկները հաւասարեցնել։ Հայաստան (№ 220) առնելով լրագրներից հազորդում է, որ Սրբ. Սինօդի կազմած յանձնաժողովը, որի նախագահն է Կիեվի միտրոպոլիտ Ֆլավիանը, եկել է այն եղրակացութեան, որ թեմական խւրաքանչիւր առաջնորդ ստանայ տարեկան 6000 ռուբլուց ոչ պակաս Առաջնորդներին այդ քանակութեամբ ոռճիկ տալու համար յանձնաժողովին եղրակացութեամբ պէտք կը լինի, գեռ մինչև 33,500 ռուբլի, որը կարելի է գանձել 1, այն թեմերի եպիսկոպոսարաններից, որոնց եկամուտները աւելի են, 2, մայրավանքերից (լաւրա) և 3 վանքերից, Յանձնաժողովի նախագահ Ֆլավիան մետրոպոլիտը յատնեց, որ Կիեվո—Պեչերեան մայրավանքի արդիւնքի